# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
# 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝
2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի
N 170-Ն ՈՐՈՇՄԱՄԲ

# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի բյուջեի նախագիծը մշակվել է համայնքի 2022-2026թվականների 5-ամյա զարգացման ծրագրի և 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի հիման վրա՝ հաշվի առնելով Սևան համայնքում ընդգրկված բնակավայրերի առանձնահատկությունները, առկա խնդիրները:

Սևան միավորված համայնքում ներառված բնակավայրերը իրենց աշխարհագրական դիրքով, մարդկային և բնական ռեսուրսներով, արդեն իսկ միավորված համայնքի կողմից իրականացված ծրագրերով , ստեղծած ավանդույթներով, նախանշում են աշխատանքների ուղղությունները, ինչպես նաև ըստ բնակավայրերի նոր ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը:

Բյուջեն պլանավորվել է համայնքի ֆինանսական վիճակը բարելավելու մտայնությամբ՝ ճշտելով սեփական եկամուտների պլանային ցուցանիշները, առանցքում ունենալով բնակավայրերի համաչափ և կայուն զարգացումը: Բյուջեի կազմման հիմքում համայնքի զարգացման շարունակականության ապահովումն է, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների բնականոն աշխատանքը, ինչպես նաև գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի, ընթացիկ և սուբվենցիոն ծրագրերի իրականացումը:

Սևան համայնքի 2025 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի ընհանուր գումարը կազմել է 3 269 097,3 հազ. դրամ, այդ թվում 2 169 097,3 հազար դրամ համայնքի բյուջեի վարչական մաս և 1 710 000.0 հազ. դրամ համայնքի բյուջեի ֆոնդային մաս, դեֆիցիտը /պակասորդը/ 0.0 մլն. դրամ: Սևան համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի կանխատեսված եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 2 169 097,3 հազ դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա՝ 2024թ-ի պլանավորված /ճշտված/՝ 1 919 000,0 ճշտված բյուջեն՝ 250 097,3 հազար դրամի չափով:

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական ճշտված եկամուտները կազմում են 563 600.0 հազար դրամ, որը գերազանցելու է 2024թ-ի ճշտված պլանը / 559 000,0 հազ.դրամ/ 4 600,0 հազար դրամի չափով:

Սևան համայնքի 2025 թվականի վարչական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 3 269 097,3 հազար դրամի չափով: Ծախսերի 2 169 097,3 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին /վարչական բյուջե/:

1 710 000.0 հազար դրամը կապիտալ ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի գումարը կազմում է 300 000 հազար դրամ, դեֆիցիտը 0.0 դրամ:

Նախագծով առաջարկվող բյուջետային ընթացիկ ծախսերում 24,7 %-ը կամ 537 497,3 հազար դրամը բաժին է ընկել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ոլորտին, «Շրջակա միջավայրի պաշտպանություն» ոլորտին ՝ 18,4 %-ը կամ 400000.0 հազար դրամ, «Հանգիստ, մշակույթ և կրոն» ոլորտին 3,5 %-ը կամ 74100.0 հազար դրամ, «Կրթություն» ոլորտին 23 %-ը կամ 499000.0 հազար դրամը, «Սոցիալական

պաշտպանություն» ոլորտին 1.1 %-ը կամ 26000.0 հազար դրամ: «Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր» ոլորտին 28,1 %-ը կամ 610 000,0 հազար դրամ: Պահուստային ֆոնդը նախատեսվել է վարչական բյուջեի եկամուտների 28,1 %-ի չափով՝ պահովելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի պահանջները /ընդ որում 2024թ-ին վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացումը ֆոնդային բյուջե 20 տոկոսից հասցվել է 30 տոկոսի/:

Ես դիմում եմ Սևան համայնքի ավագանու անդամներին, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, համայնքապետարանի և վարչական բնակավայրերի ղեկավարներին ու աշխատակազմերին՝ ամենօրյա համայնքապահպան աշխատանքի և նպատակասլաց գործունեության շնորհիվ, կյանքի կոչել Սևան համայնքի 2025թ. բյուջեում նախանշված ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը: